

«ՄՈՏԵՑԻՐ ՆՐԱՆ. ԻՆՉԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ ԶԷ»

Հ. Գ. Մուսաբեկյան

Գլրականությունյան և ժուռնալիստիկայի ամբիոն

Սույն ուսումնասիրությունը նպատակադրված է արդի հայ բանաստեղծության զարգացման մի քանի առանձնահատկությունների բացահայտմանը: Իրականության գեղարվեստական յուրացման համապատկերի վրա ըննության են ածված ժամանակակից հայ պոեզիայի առաջատար դեմքերից մեկի՝ Արտեմ Հարությունյանի ստեղծագործության հիմնական դրոյթները, որոնք առիթ են տալիս վերադիտարկելու պոետական արվեստի օրինաչափությունները:

Մերօրյա իրականությունն այնքան լսառն ու բազմազան է, որ գեղագիտական ընդգրկումների համար ուսումնասիրության օջեմետքները ճրքելն ղառնում են խիստ զայրմանական: Գեղարվեստի սահմանների ընդլայնման ու նորացման նպատակով ժամանակաշրջանի գեղալավորումը գեղես չի կարող լինել պոեզիայի զարգացման հիմնական նպատակամաս: Կարևոր է հաշվի առնել, որ իրադարձային աշիի արժուրումը տակավին քիչ բան է ասում բանարվեստի իրական կոչման մասին: Եվ ընթ մերօրյա անկանի հոգևոր պահանջները փոխվում են, ապա նրանց զուգահեռ արդի բանաստեղծությունը պետք է հետամուտ լինի նրկոյթի ոչ թն տիպաբանական և կամ ձևաչափային փոփոխություններին, այլ նրա միջուկի բացահայտման գեղագիտական նոր չափորոշիչներին:

Վերոհիշյալ հարթության վրա 60-ական թվականների հայ բանաստեղծության ինքնահաստատման ճանապարհին մի հետաքրքիր տեղաշարժ կարելի է նկատել: Մերնդի ասպարեզ մտնելուն անմիջապես հաջորդեց այն տեսակետը, թն ժամանակակից բանաստեղծությունը կտրված է իրականությունից և ոչ մի ընդհանուր նգրագիծ չունի կյանքի բնականոն ընթացքի հետ: Իսկ այսօր կարծես թն փոխվել է հիշյալ զուգահեռականի վրա սերնդի բանաստեղծությանը տրված գնահատականը, ըստ որի իրականությունն իր անմիջական արտացոլումն է գտնում բանաստեղծության մեջ: Ինչո՞վ բացատրել այս շրջադարձը: Մի՞թն կյանքի իրական օիթմից կտրվելու քննադատության մտահայտությունն է, որ փոփոխություն մրտցրեց իրերի ու գործողությունների դասակարգումներում: Արդյո՞ք Մերն-չորս տաս-

նամյակի ընթացքում բանաստեղծության վերակառուցման փաստը բաղընկալման ինտելեկտից ու մտափորից անցում կատարեց դեպի կենսական դաշտ, ուր օրվա արձագանքը դարձավ պոեզիայի առաջնգային նրակը:

Այս և նման հարցադրումների համատեքստում փորձենք քննության առնել սերնդի առաջատար գեմքերից մեկի՝ Արտեմ Հարությունյանի ստեղծագործության մի քանի առանձնահատկությունները, որտեղ միանգամայն այլ դրսերումներ են գտնում իրականության գեղարվեստական ընկալման նրանակաները:

«Ա.Հարությունյանի բանաստեղծությունները, - գրում է Ալ. Թոփչյանը, - կարելի է քնորոշել որպես անդադար ձգտում հայտնիից դեպի անհայտը և հակառակը»/Ալ. Թոփչյան, «Բադի սահմանները», Երևան 1978թ. էջ 104/: Թնադատի այս նկատառումը փոր-ինչ ընդհանրական ու քնորոշիչ է բանաստեղծի կերպի բացահայտման համար: Երևույթների առարկայական ընկալումն ու նրանց մակերեսային շերտերի առատկերակառուցվածքային դիտողականությունը հեռու են անհայտության բանաձևումների մշակման միտումներից: Նրանք նշանների տեսքով խորիքայնում են նույն այդ երևույթները, որոնք ներքին տրամաբանության ընդհանրացումն են անհատի ու շրջակա աշխարհի ինտելիության նախապայմանը:

Իր հեղափոխական կնցվածքով ու անկաշկանդ մտածողությամբ Ա. Հարությունյանը փորձում է նոր հենակետեր հայտնաբերել պայմանական ու իրական աշխարհների միջնորմներում, երևակայության փայլատակումներում նոր որակներ վերագրել իրերի նախախիստությանը: «Զադաքի գորշության մեջ խաչված պոետի ճալքորդ ալյունը» նոր հորիզոններ է որոնում, ուր բանաստեղծի «վերջագուղ նս-ը պատրաստ է նոր կյանքի, նոր փորձության»: Երբեմն կցկտուր ու անավարտ թվացող պատկերներն ու տրամադրությունները իրենց մեջ կրում են թաքնված հոգեմիժաններ, որոնք կյանքի անհագնացող հոսքի մեջ մարմնավորվում են հասնելով ներաշխարհային կառույցի ուրույն ամբողջականության:

*Տխոր տարվա սկիզբ,
ժյունը նուր է, կյանքը՝ խիտ,
ինչ եղել է, կա՝ դադարել է լինել
հարստուում է այն, ինչ անհայտ է եղել:*

*Ձեռն հաղատում, որ ակնթարթ էր սլաքը ցցում,
որ հյուսված ծայրը ճաքում է վերթում,
և ինքը՝ փորորդը,
դնմբերով լեցուն, միրաժ էր, լույսի
արագ-անդադարձում:*

Բանաստեղծի գեղարվեստական մտածողության այսօրինակ դրսևորումները շատ հաճախ բացասական արձագանք են գտել քննադատության կողմից: Ոմանք այն կարծիքին էին, թե պատկերների ու տրամադրությունների անավարտվածությամբ ու հոգեբանական անցումների նմանօրինակ կիսատնայնությամբ Ա.Հարությունյանը չի հաճնում բանաստեղծական կառույցի ներդաշնակության ու հայտնությունների անհրաժեշտ խորքայնության: «Պատկերների միջև եղած տարածությունը շատ է կտրված, - գրում է Դավիթ Գասպարյանը, - տրամաբանական միացման կետեր թեև կան, այնուամենայնիվ, դրանք իրարից շատ են հեռու, այդ իսկ պատճառով մտքի և զգացմունքային անցումները ասելիքի կապը կտրելու աստիճան չափից դուրս շատ են վերացարկվում» /Դ.Գասպարյան, «Բանաստեղծության ոգին», Երևան 1980 թ., էջ 182: Քննադատի այս դիտարկումը փոքր-ինչ վիճարկելու տեղիք է տալիս այն առումով, որ իրենց արտաքին տարանջատվածությամբ հանդերձ, այդ պատկերներն ու տրամադրությունները ձեռք են բերում յուրատեսակ ինքնատվություն: Երբեմն կրկնով առանձին խմատներ նրանք ակնթարթային զգացմունքայնությամբ ու նրբորանգային հնարանքներով միաեղյուսվում են իրար՝ հասնելով տրամաբանական ներքին համահարթվածության: Իր ապրած ժամանակի խոր ուսումնասիրման, մարդկանց ու հասարակական հարաբերությունների ներմխման, իրականության դիմապատկերի ընկալման իր ճշգրիտ հայտնություններում Ա. Հարությունյանը ձեռք է բերում գեղարվեստական խոսքի մաքրագրման այնպիսի մի վիճակ, «որ արյունդ սեղմվում է մազկան և կարծեցյալ կյանքի արանքում»: Մտքի ու երևակայության իր անակնկալ թռիչքներով բանաստեղծը հասնում է մի զգացմունքայնության, «ինչը խոսքի մեջ չէ», և նոր տարածություն է փնտրում վերադասավորելու իրեն ու վիճակները:

*Անուն, քնզ նորից եմ անվանում,
փոխելու համար տարածությունը այս
վիճակների,
որ չեն ճանաչում ու լսում իրար:*

Պոեզիան իրական դաշտ տեղափոխելու Ա.Հարությունյանի պորտալիստական փնտրողությունը առավել հստակորեն դրսևորվեցին «Նամակ Նոյին» և «Հուլայի արձակուրդը» ժողովածուներում:

Իր մաքրողական տպավորությունը հայտնելով «Նամակ Նոյին» ժողովածուի առիթով, ահա թե ինչպիսի ընդհանրացում է կատարում Սևակ Արզումանյանը. «Մա խիզախ մարտահրավեր է և մեր պոեզիայի զարգացման այն միտումներին, որոնց զաղափարական ու գեղարվեստական պարագծերը շատ հեռու են Արմեն Հարությունյանի լայնահուն ընդգրկումների հորիզոններից, որոնք թե մտածական, թե արվեստագիտական չափումներով այսօր համընթաց չեն քայլում եվրոպական ու համաշխարհային պոեզիայի զուգահեռականներում» /«Մենայտության հզոր ծայր», «Հուլայի արձակուրդը», Երևան 2003թ. էջ 436/: Գրականագետի այս բնորոշումը թերևս առավել մարմնավորվում է, երբ այն փորձում ենք քննության առնել գեղարարաչառական պոեզիայից դեպի քաղաքացիական կատարած բանաստեղծի փոքր-ինչ կտրված շրջադարձի մեջ: Երևույթների ու գործողությունների թանձր համապատկերի վրա հեղինակը բացահայտում է մնորդալ անհատի հոգեբանական ներքին դրաման, իրականության բարդույթի մեջ խնամքով պատվաստում այն հարատրոփ կենսաառիթմը, ուր «առագնությունը տիեզերքի ոչինչ է խղճահարությունից ծնված ցավի առաջ»:

*Այստեղ՝ Ստեփանակներտում,
ավերված մետաքսի գործարանի շուրջ
նմբակոծումից հետո շնորամի հազարավոր
բոժոժներ կան սփռված՝
փոքրիկ, դեղին թիթեռներ, ասես Աստծո
աչքից ընկած արցունքներ,
որ սառել, կառչել են ցուրտ հողին:*

Պատերազմական գործողությունների համատեքստում Հարությունյանը ստեղծում է արտակենդր, մերկ ու անողորմ, բայց միաժամանակ գեղեցիկ ու խղճահարույց մի պատկեր, ուր երևույթի ընկալման հոգևոր տիրույթները հերքում են այն տեսակետները, թե բանաստեղծը սահմանազատված է իրեն պոեզիայի ազգային ավանդներից: Ի դեպ, արցալիյան հողի խորհուրդը մշտապես արթուն է եղել հեղինակի ներհայեցումներում, ինչը իրավամբ նկատել է նրա տաղանդավոր սերնդակից Դավիթ Հովհաննեսը. «Ջարմանալի մի «սևեռու գաղափար», մի մղձավանջ, մի հպարտություն, մի հույս, մի տեսիլք միշտ հետապնդում է բանաստեղծին. դա Ղարաբաղն է, արցալիյան» կամայ դրավարդ», որի դեմապան է նա իրեն զգում ամենուրեք, աշխարհի որ ծայրում

ել լինի...» /«Բանաստեղծություն»՝ սահմանից անդին», «Գարուն», թիվ 2, 1999թ./:

Նյութական հիմն ու ներառյալի համատեղումն ու արդյունքում պոետական նոր կոլտուրայի ձևավորումը Ա. Հարությունյանի ստեղծագործության առաջատար խնդիրներից են: Թեմատիկայի արդիականության, աշխարհադարձական տեղաշարժերի գերտեղեկացվածության, նրանց զուգահեռ ինտելեկտուալ մտածողության ու բանաստեղծական հոգի պոեզիայի փոխհարստացման շնորհիվ նա համարձակորեն առաջադրում է խաղի իր կանոնները, որոնք, Սերգեյ Սաբինյանի ձևակերպմամբ, «առիթմ են տալիս վերստին մտորելու իրական մի առեղծվածի մասին, թե ինչ է կատարվում արդի բանաստեղծության հետ» /«Արտոմ Հարությունյանի պոետական ավտարանը», «Եղիցի լույս», թիվ 11-12, 2003թ./:

Ժամանակը դժվարությամբ է հարմարվում արվեստի նորաստեղծություններին: Մարդկության հոգևոր ընթացքը, ի տարբերություն մտավորի, դանդաղաշարժ է ի վերուստ: Աշխարհի արտաքին ձևույթը հիմնականում խթանում է մտքի զարգացմանը: Հոգու համար այն դառնում է ծառցյալ, քանզի հոգևորի սահմանումներն առավել ճշգրիտ են, հետևաբար և՛ անտարբեր անակնկալների հանդեպ: Ժամանակակից աշխարհի հետ մարդը հարաբերվում է նախ և առաջ իր մտավոր էներգիայով: Ուստի մրտաբիւ թելադրած ամեն մի նորություն նա արձագանքում է անմիջապես, քանզի հակառակ դեպքում իրականությունը չի կարող նրաշխարհում նրա փաստացի գոյությունը: Այլ է հոգու պարագայում: Նա չի ծրագրավորվում, ինչպես միտքը: Նա ունի բնություն նախասահմանած իր ձևաչափը, որը արտաքին փաստերի ազդեցությանը դժվարությամբ է ձևախնդիր, որտեղից էլ՝ նրա վերապահումը աշխարհիկ զարգացումների նկատմամբ: Այս առումով անհերքաձև ու դաժան են արվեստի օրենքները: Ժամանակակից իրականությանը համահունչ լինելու նպատակով նա /արվեստը/ պետք է գտնվի իրադարձությունների կիզակետում: Այստեղ, բնականաբար, նրանից պահանջվում են անակնկալ զարգացումներ, կայացման հարափոփոխ զիրարդրումներ, որոնց էլ հավելում է հոգևորի գործոնը: Հիմնավորումների այսպիսի դասավարդմամբ նորը արվեստում չի կարող ծնւթ բերել հանրաճանաչություն: Այն երկար ժամանակ մնում է անսնձիխ խավերի հետաքրքրությունների շրջանակներում: Այսպանով ենթադրել կարելի է, որ

ժամանակակից արվեստից, մեր դեպքում պոեզիայից զարգացման հիմնադրությունների այլընտրանք պահանջելը կլինի խիստ անտրամաբանական ու ժամանակավրեժ:

Տասնամյակներ առաջ, մեր նորի առաջադրած բանաձևումները տակավին անհամապատասխան էին դասական ավանդներով դաստիարակված քննադատության պատկերացումներին, բավական հոռետեսական էին կարծիքները պոեզիայի վաղվա օրվա մասին: Օտար արժեքների ներմուծման փաստը ներկայացվում էր խտացված գույներով, որոնք ահագնեցում էին ավանդական, ազգային չափանիշների աղճատման ու անհետացման վտանգի մասին: Ասվածի առթիվ անհանգստության ահա թե ինչպիսի ներքին լարումով է արձագանքում արձակագիր Ռուբեն Հովսեփյանը. «Ինտելեկտուալ շանտաժ»՝ այնպիսի մթնոլորտ է հյուսում, որ մարդ հետադիմական, տգետ կոչվելուց վախճած չի համարձակվում հարցնել Հեղոյանին՝ թե ի՞նչ գործ ունես սուպերմարկետի ու Այնս Գինզբերգի հետ կամ Ա. Հարությունյանին՝ ինչու՞՝ ես մտել «Բաբելոն» հյուրանոց... Չերինգ Զրոս, Թրաֆալգար, Մինթալ Գինչլի... Ի՞նչ են սրանք, ի՞նչ են տալիս ինձ՝ ընթերցողիս, որ հայ եմ, և ի՞նչ կտա անգլիախոսին, եթե մի օր «Բաբելոնը» թարգմանվի անգլերեն» /«Նվկարվելով ձեր պայման մեզ եղածով», «Գրական թերթ», թիվ 7, 1985թ./:

80-ականներին գրական մթնոլորտում ձևավորված այս բուսավախությունը ոչ միայն կանգնեց արդի բանաստեղծության զարգացման ընթացքը, այլև ժամանակի հետ առավել անկեղծ նրա ուղղությունը:

Փորձելով «շտել մեյնիմ-մեյնիմից» ծերացած հայ պոեզիայի կրճատ մեջքը՝ Արտոմ Հարությունյանը ներկայացավ «Նույնի արձակուրդը» նոր ժողովածուով, որի համեմատ, ըստ Ս. Սարինյանի «Նամակ Նոյին» ժողովածուն սոսկ նախորդանք կարող է համարվել» /«Եղիցի լույս», թիվ 11-12, 2003թ./:

Իր թեմատիկ տարադրականությամբ ու հարցադրումների անսովորությամբ գիրքը շրջանցում է հայ պոեզիայի զարգացման միտումների վերաբերյալ քննադատության՝ արդեն իսկ ձևավորված պատկերացումները՝ նոր ընթացք հաղորդելով պոետական մտքի անակնկալ զարգացումներին: Ակնհայտ է մի իրողություն. գրքից գիրք Արտոմ Հարությունյանն ընդարձակում է բանաստեղծական իր տեսադաշտը, ուր խորհրդանշանին հետոհետ փոխարինելու է գալիս առարկայական առավել դաժան գույներով ներկայացնելով աշխարհն ու նրանում տեղի ունեցող իրադարձությունները:

Ժողովածուի ամբողջական ընթերցումից հետո մի ցանկություն է առաջանում. պաշտպանել բանաստեղծի կողմից առաջա-

գրված «Տագնապի» կուսակցության ստեղծման գաղափարը, «որ հետո նրանք չդառնա քաղաքական քաղվանսարա»:

Տիեզերական այս հսկայածավալ խռովքի մեջ հեծինական արծաթածուռ է աշխարհափույզ խնդիրները, քառասյին իրավիճակների վավերացմամբ հասնում հոգեկան ծայրահեղ պրկման՝ ընթերցողին փոխանցելով իր ներքին լարումը՝ միաժամանակ չլուսացնելով նրա նրևաէայական շղթան: Իր անհանդուրժողական կեցվածքով ընթերցողին է ներկայանում աշխարհաքաղաքական տալաքետայթ իրադարձություններով գծերանրաբեռ ժամանակակից մարդը, որը, քննելով աշխարհի բանը՝ գուժում է.

*2000 թիվն է,
հաջորդ սերնդի համար՝
համարյա ոչինչ չատող
չնչին մի բան:*

Թժնատիկ ընդգրկումների աննավադեպ տարողունակությամբ ու հարցադրումների սրությամբ հանդերձ՝ գրքում իշխող տրամադրությունները միայլար են: Որոշ դեպքերում տպավորություն է ստեղծվում, թե ժողովածուում տեղ գտած բանաստեղծությունների մեծամասնությունը մեկ ընդհանուր վերնագրի տակ կարդալու դեպքում էական ոչինչ չի փոխվի:

Իր խորքայնությամբ ու ներույթների ընկալման այլակերպությամբ գրքում առանձնանում են մի քանի գողտրիկ բանաստեղծություններ, որոնք լրջորեն խորհելու տևողք են տալիս Ա. Հարությունյանի պոեզիայի զարգացման մասին: Ահա դրանցից մեկը.

*Օ, դու, վարանում,
Օ, իրագործում ու ծաղկում ծաղկի ...
Մոտեցիր նրան, ինչը խոսքի մեջ չէ...
Ներշնչման պահը կայծակի նման
Լուսավորում է նորոշ իրերի համար,
Բայց առաջընթացը մթնոցնում է բառը
Ու կապում թռիչքը թռչնի մահվան հետ:
Ասես գետ, նս հոսում մե ջրիմուռների
գոյության վրայով,
Ես հետապնդում եմ բառը կորստի համար,
Ես ծնվում եմ նորից-
Դեռ մահը չի հավատում իր բախտին...
«Նտապնդում»*

1973թ. «Նշանների նրկիր»
Ժողովածուում հրատարակված այս բանաստեղծությունը, որը, ի դեպ, մի շարք ընդհանրություններով հիշեցնում է Ռիկկին,

սկսված ուշադրության ու խորհրդաժողովան է հրավիրում. ինչպիսի՞ տեսք կու-նենար Ա. Հարությունյանի պոեզիան այսօր, եթե անցած շուրջ երեք տասնամյակների ընթացքում ունենար զարգացման նմանօրինակ հիմքեր... Դժվար է ասել: «Իսկ հայ պոեզիան //ստորոյի համաժայն, //նկատում է միայն// ծաղկած ծառերը...», - կասեր բանաստեղծը՝ ընդհանրացնելով.

*Մեկ հրճվում եմ,
որ Ղարաբաղի խնձորենիները
յգվել են խիտ ծաղկներով, և սարսափում
են, երբ լսում եմ
Թուրքիայի վաղապետ Էջլիթի ճառերը
Ընդդեմ հայերի ու փոքրամասնության:
Բայց պատկերացնում եք.
վերջին շրջանում միայն նման ճառերն են
քշում ինձ դեպի գրասեղան ...*

Ժողովածուի առիթով գրական մամուլում հանդես եկած մեր անվանի գրականագետների /Ս. Սարինյան, Ս. Արզումանյան, Դ. Գասպարյան և ուրիշներ/ ընդհանրացված գնահատականը, կարելի է ասել, միանշանակ էր. Ժողովածուն նոր հորիզոններ է բացում հայ պոեզիայի զարգացման համար, բանաստեղծա թռիչքների է ոգեկոչում գեղարվեստական մտածողությանը և այլն: Չնայած գրքի վերաբերյալ հրատարակված բոլոր գրախոսականներում մատնանշվում են նաև որոշակի թերություններ, բայց, այնուամենայնիվ, չկա պոեզիայի վաղվա օրվա մասին խիստ մասնագիտական կասկածամտություններ ու միաժամանակ անկեղծ ու համոզիչ մտահոգություններ, որը, ըստ իս, բանաստեղծություն առ բանաստեղծություն, ուղեկցում է ընթերցողին: Այն փաստը, որ «Հուլայի արձակուրդը» ժողովածուն իր ամբողջության մեջ արդեն իսկ ներույթ է արդի հայ իրականության մեջ՝, ներկրորդել, թերևս, չի կարելի: Սակայն բանախոսների ուշադրությունից, թվում է, վրիպել են մի շարք նկատառումներ, որոնց անհրաժեշտ վերհաման դեպքում դժվար թե գիրքը նրաշխարհովիր որպես լիիրավ անցագրային պոեզիայի զարգացման ճանապարհին: Այսպիսով, նորարարական ինչպիսի՞ սահմանումներ վերագրել այն հանգամանքին, որ բանաստեղծի կենսական տոհմությունների հետևանքով վերածվել են չափազորությունների և ամենախորքային թափանցումների դեպքում անգամ, շատ քիչ բան են հուշում բոլոր դեպքերի համար գեղարվեստի առաջին անհրաժեշտ դրույթների մասին: «Նյու Յորքում, Փիթեր Բալաքյանի հետ, ծանոթանում էինք ժամանակի անտես մամլիչի հետ» բանաստեղծության մեջ, օրինակ, հեղինակը

տասնհինգ ստվար էջերի վրա չկապակցվող ու անհետաքրքիր մանրամասնություններով նկարագրում է, թե ինչպես Նոյն Յոգրի փողոցներով ինքը շրջում է ամերիկահայ գրողի հետ, «որի կամքը անկոտրում // հում նրշիկ է ամբողջ...» և որը «մասնագետն էր// դիմափոշի քսած, համով-բորբոսած// «Սալամի» նրշիկի, որ պարծիլով հայտն էր // եվրոպական ձև ընդունած մարդու քիմրում...»: Այնուհետև ամբողջ բանաստեղծության մեջ նրկար-բարակ խոսակցություն է ծավալում նրշիկների, տասնյակ տեսակների նրի ու նրանց յուրօրինակ հատկությունների մասին, և քիմիքի եվրոպական ձև տալու մեծագույն ճիգերն անգամ չեն կարողանում այնտեղ ի հայտ բերել գեղարվեստական որևէ լուրջ արժանիք: Նույն բանաստեղծությունը հեղինակն ավարտում է Փ.Բալայանի «Ճակատագրի սև շուրը» վեպի հովանավոր և հրատարակիչ Լուիզ Սիմոն Մանուկյանի հասցեին արված գանգատով, որի համար ամիթ է հանդիսացել վկայի հայերեն թարգմանության մեջ թարգմանչի իր անունը արժանիորեն չհիշատակելու փաստը:

... և անունս կհայտնվի միայն գրքի վերջում՝
Փիթերի նրայտագիտության խոսքի
մատույցներում ...
Մի բան պարզ էր՝
գրքի հովանավոր և հրատարակիչ
Լուիզ Սիմոն Մանուկյանը
մեծահարուստներից շատերի նման
չէր գնահատել արվեստագետի աշխատանքը:

Կարծում եմ մեկնաբանություններ կարիք չկա: Միայն պետք է թողնել հիշեցնել այն ճշմարտությունը, որ ամենանեղ անձնական ու կենցաղային դետալներն անգամ կարող են թափանցել գեղարվեստական խոսք այն պայմանով, եթե ուղեկցվում են նույն այդ գեղարվեստական խոսքին առաջադրված հիմունքներով:

Մի հանգամանք ևս, որ չի հիշատակվել գրականագետների կողմից գրքին տրված գնահատականներում. այսպես կոչված, գեղարվեստի լույսի բացակայությունը: Գնացել թե՛ կարելի է վիճարկելով հանդերձ ընդունել ժամանակակից պոեզիայի մատուցած բազմաթիվ անակնկալները, քայց «լույսի» բացակայությունը՝ բնավ: Թող այն լինի փորքինչ աղոտ, ներս թափանցի վարագույրներից, ուղեկցվի թանձր ստվերներով, սակայն նրբեք չկուրանա այս հոսմակ գորշության լուսա-նկարման ակնթարթային

պայծառությունից: Այս նկատառմանը թերևս չհամաձայներ Սևակ Արզումանյանը՝ ասելով. «Ամբողջ նրա /Ա. Հարությունյանի-Վ.Մ./ ներքին ցասումը մի գերլսնդի ունի՝ կյանքի աղտեղության վնասումը, գեղեցիկի ու ներդաշնակի հաստատումը /«Սա գիտի իր տեղն ու դերը», «Գրական թերթ», թիվ 40, 2003թ./: Արդարև: Բայց արդյո՞ք կյանքի աղտեղությունը վնասվում է նրա առարկայական ցուցադրմամբ, արդյո՞ք գեղեցիկն ու ներդաշնակը հաստատվում են միմիայն աղտեղության հակաանիշը լինելու հանգամանքով ...

Ամփոփում

Ա. Հարությունյանի ստեղծագործության միջոցով ժամանակակից բանաստեղծության մեկնությունը ցույց է տալիս, որ, համեմայնդեալ, անկանխատեսելի են գեղարվեստի զարգացման ուղիները: Մի հանգամանք, սակայն, պետք է անվերապահորեն ընդգծել. բոլոր դեպքերի ու ժամանակների համար պոեզիան պետք է ունենա իր այն բարձրակետը, որտեղից հստակորեն նրկում է մարդկային հոգու անպարփակ լույսը:

Резюме

Комментирование современного стихотворения путем творчества А. Арутюняна показывает, что пути развития художественного искусства непредсказуемы. Однако, безоговорочно, следует подчеркнуть одно обстоятельство: для все времена и случаев поэзия должна иметь свою ту высшую точку, откуда ясно виден свет человеческой души.

Գրականություն

1. Ալեքսանդր Թոփչյան, «Բառի սահմանները», «Սով. գրող» հրատ., Երևան, 1978թ.
2. Արտնվ Հարությունյան, «Ճնմ», «Սով. գրող» հրատ., Երևան, 1984թ.
3. Դավիթ Գասպարյան, «Բանաստեղծության ոգին», «Սով. գրող» հրատ., Երևան, 1980թ.
4. Արտնվ Հարությունյան, «Հուզայի արձակուրդ», «ՀՄՍ հրատ. Երևան, 2003թ.
5. «Գարուն», թիվ 2, 1999թ.
6. «Եղիցի լույս», թիվ 11-12, 2003թ.
7. «Գրական թերթ», թիվ 7, 1985թ.
8. Արտնվ Հարությունյան, «Նշանների նրկիր», «Սով. գրող» հրատ., Երևան, 1973թ.